Հարգելի երկրապահներ,

Շնորհավորում եմ ձեզ Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ:

Շրջում ենք պատմության եւս մեկ տաի: Մեր երկիրը նոր տարին մուտք է գործում խաղաղ եւ հանգիստ սահմաններով: ԵՎ այդ ամենի մեջ մեծ է ձեր՝ երկրապահներիդ ներդրումը:

Սիրելի երկրապահներ, Հայաստանի Հանրապետության անկախության ձեռքբերման առաջին իսկ օրերից դուք մասնակիցն եք երկրի կայացման, նրա սահմանների անառիկության պահպանման բոլոր գործընթացներին: Այդ ամենի հանրագումարը եղավ 2016 թվականին ապրիլյան առաջին օրերը, երբ թշնամու սանձազերծած դավադիր գործողությունների ժամանակ դուք կրկին առաջնագծում էին եւ երկրի ռազմական ուժերի հետ միահամուռ հնարավոր եղավ եւս մի պատմական հաղթանակ արձանագրել:

Դուք հավատարիմ եք ձեր պատվախնդիր կենսակերպին: Հայոց բանակի հետ եղել եք, կաք ու պիտի մնաք Արցախի եւ Հայաստանի անկախության երաշխավորը, պետականության ամրապնդման ջատագովը:

Սիրելի երկրապահներ, կրկիննորհավորում եմ ձեզ: Մաղթում եմ ձեզ առողջություն, հաջողություն, անձնական երջանկություն, խաղաղություն մեր երկրի սահմաններին եւ ողջ աշխարհում: